ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՇՊՀ), ի դեմս ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Երվանդ Սերոբյանի, ով գործում է ՇՊՀ Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ն (այսուհետ՝ ԿՀԶ ՀԿ), ի դեմս նախագահ Գոհար Մարկոսյանի, ով գործում է ՀԿ-ի Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով բարձրագույն ուսումնական հաստատություն – հասարակական կազմակերպություն համագործակցության ապահովման, կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1 Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

1. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունը

Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական ոլորտում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, աջակցությունը ՇՊՀ ուսանողներին մասնակցելու ԿՀԶ ՀԿ և գերմանական Kreisau-Initiative e.V. կազմակերպության կողմից Erasmus + ծրագրի շրջանակներում համատեղ իրականացվող Model International Criminal Court դասընթացներին, որը տեղի կունենա Լեհաստանի Կրզիզովա քաղաքում 2020թ. մարտի 6-13-ը ընկած ժամանակահատվածում:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1.Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:

2.2.Համագործակցության նպատակով, Հուշագրի հիման վրա, Կողմերը պարտավորվում են.

ա/ ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված ծրագրի ու դասընթացների անցկացմանը,
բ/ անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,
գ/ ապահովել անհրաժեշտ պայմաններ՝ դասընթացների մասնակիցների ընտրության հետ կապված նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու և անցկացնելու համար,
դ/նախօրոք տեղյակ պահել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների միասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծումը:

3. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

3.1. Հուշագիրը բաղկացած է 2 էջից և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
3.2. Հուշագիրը կնքվում է 1 տարի ժամկետով:
3.3. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
3.4. Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագրի դադարեցման անհրաժեշտության դեպքում մյուս Կողմը պետք է տեղեկանա այդ մասին գրավոր՝ ենթադրյալ լուծման պահից առնվազն 10 օր առաջ:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1.Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

5. Կողմերի իրավաբանական հասցեները

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	«Կանայք հանուն զարգացման » ՀԿ
Հասցե՝ ք. Գյումրի, փ. Պ. Սևակի-4	Հասցե՝ ք: Գյումրի, Շահինյան 6ա, բն.16
Էլ. Հասցե՝ info@shsu.am	Էլ. Փոստ՝ info@wfd.am, goharmark@gmail.com
Հեռ.՝ +374 312 6 94 94	Հեռ.՝+37433007
Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Երվանդ Սերոբյան	Նախագահ՝ Գոհար Մարկոսյան
Կ.Տ.	Կ.Տ.
«18» դեկտեմբերի 2019թ.	«18» դեկտեմբերի 2019թ.